ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	**ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային Զարգացման Նախարարություն (HUD)**	OMB Հաստատում թիվ. 2577-0286 Վավերական է մինչև՝ 06/30/2017թ.

Ձևաթղթի նպատակը՝ Եթե Դուք հանդիսանում եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ և Դուք ցանկանում եք անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխություն, ապա Դուք կարող եք օգտագործել տվյալ ձևաթուղթն՝ անհապաղ տեղափոխություն հայցելու և Կանանց նկատմամբ Բռնության մասին Օրենքի (Violence Against Women Act (“VAWA”)) համաձայն անհապաղ տեղափոխության իրավասության պահանջներին Ձեր համապատասխանությունը հավաստագրելու համար: Չնայած, որ օրենքի անվանումը հղում է կատարում կանանց վրա, այնուամենայնիվ VAWA-ի շրջանակներում իրավունքները և պաշտպանությունը կիրառել են ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման բոլոր զոհերի նկատմամբ: Տվյալ փաստաթղթի օգտագործումն անվերապահորեն չի նշանակում, որ Ձեզ կտրամադրվի անհապաղ տեղափոխություն: Անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության հասանելիության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով՝ ծանոթացե՛ք Ձեր բնակարանային ապահովման մատակարարի անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության ծրագրին:

<u>Պահանջները, որոնց Դուք պետք է համապատասխանեք հետևյալն են.</u>

(1) Դուք հանդիսանում եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ: Եթե Ձեր բնակարանային ապահովման մատակարարը դեռևս չունի այն փաստաթղթերը, որոնց համաձայն Դուք հանդիսանում եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ, ապա Ձեր բնակարանային ապահովման մատակարարը կարող է խնդրել, որպեսզի Դուք ներկայացնեք նման փաստաթղթեր: Ի պատասխան Դուք կարող եք ներկայացնել HUD-5382 Ձևաթուղթը կամ այդ Ձևաթղթում թվարկված փաստաթղթերի տեսակներից որևէ մեկը:

(2) Դուք հստակորեն խնդրել եք անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխություն: Տվյալ ձևաթղթի ներկայացումը հաստատում է, որ Դուք հստակորեն տեղափոխություն եք խնդրել: Ձեր բնակարանային ապահովման մատակարարը կարող է պահանջել, որպեսզի Դուք ներկայացնեք տվյալ ձևաթուղթը կամ կարող է ընդունել որևէ այլ գրավոր կամ բանավոր հայցադիմում: Խնդրում ենք ծանոթանալ Ձեր բնակարանային ապահովման մատակարարի անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության ծրագրին՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար:

(3) Դուք խոհեմաբար հավատում եք, որ Ձեզ սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե Դուք մնաք Ձեր ներկայիս տեղակայման վայրում: Դա նշանակում է, որ Դուք վախենալու պատճառներ ունեք, որ եթե Ձեզ չտրամադրվի տեղափոխություն, ապա Դուք բռնության կենթարկվեք շատ մոտ ապագայում:

ԿԱՄ

Դուք հանդիսանում եք բռնաբարության զոհ և այդ դեպքը տեղի է ունեցել Ձեր տեղակայման վայրում 90 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև Դուք տեղափոխություն եք խնդրել: Եթե Դուք հանդիսանում եք բռնաբարության զոհ, ապա ի լրումն անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության իրավասությանը՝ այն պատճառաբանությամբ, որ Դուք խոհեմաբար հավատում եք, որ Ձեզ սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե Դուք մնաք Ձեր ներկայիս տեղակայման վայրում, Դուք կարող եք նաև անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության իրավասություն ունենալ, եթե բռնաբարությունը տեղի է ունեցել այն անշարժ գույքի տարածքում, որից որ Դուք Ձեր տեղափոխությունն ենք խնդրել, և որ այդ բռնաբարությունը տեղի է ունեցել 90 օրացուցային օրվա ընթացքում՝ նախքան Դուք ներկայացրել եք տվյալ ձևաթուղթը կամ այլ կերպ հստակորեն արտահայտել եք Ձեր տեղափոխության պահանջը:

Փաստաթղթերի ներկայացում՝ Եթե Դուք ունեք երրորդ կողմի փաստաթղթեր, որտեղ ներկայացված է անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության Ձեր իրավասության պատճառաբնությունը, ապա Դուք տվյալ փաստաթղթերը պետք է ներկայացնեք Ձեր բնակարանային ապահովման մատակարարին, եթե դա անելը Ձեզ համար անվտանգ է: Երրորդ կողմի փաստաթղթերի օրինակները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով. նամակ՝ զոհի ծառայության մատակարարից, սոցիալական ծառայության աշխատակցից, իրավաբանական աջակցության մատակարարից, եկեղեցական խորհրդականից, հոգեկան առողջության տրամադրողից կամ որևէ այլ մասնագետի կողմից, որից որ Դուք աջացություն եք ակնկալել, ինչպես նաև գործող դատական արգելք, օրենսդարական զեկույց կամ գրանցումներ, բռնության կատարողի կողմից կամ բռնության կատարողի ընտանիքի անդամների կամ ընկերների կողմից ուղարկված հաղորդակցությունների գրանցումներ, այդ թվում՝ էլեկտրոնային նամակներ, ձայնային հաղորդագրություններ, տեքստային հաղորդագրություններ և սոցիալական կայքերում հրապարակումներ:

Գաղտնիություն՝ Ձեր Բնակարանային ապահովման մատակարարին տրամադրված ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքի(երի)ն վերաբերող ողջ տեղեկատվությունը պետք է պահվի գաղտնի: Նման մանրամասները չպետք է մուտքագրվեն տվյալների փոխանակում ենթադրող որևէ տվյալների բազա: Բնակարանային ապահովման մատակարարի աշխատակիցները չպետք է այդ մանրամասներին հասանելիություն ունենան մինչև VAWA պաշտպանություն շնորհելու կամ մերժելու պահը, և այդպիսի աշխատակիցները չպետք է այդ տեղեկատվությունը բացահայտեն որևէ այլ իրավաբանական անձանց կամ անհատներին, բացառությամբ այն սահմանաչափի երբ բացահայտումը՝ (i) Ձեզ հետ գրավոր համաձայնեցված է սահմանափակ

ժամանակահատվածում հրապարակման համար; (ii) պահանջվում է օգտագործելու աջակցության դադարեցման առնչությամբ վտարման դատավարության կամ լսման ընթացքում; (iii) այլապես պահանջվում է կիրառելի օրենքներով:

ՊԵՏՔ Է ԼՐԱՑՎԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԶՈՀԻ ԿԱՄ ՆՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ

1. Անհապաղ տեղափոխություն հայցող զոհի անունը՝ _____

2. Ձեր անունը (եթե զոհը Դուք չեք)՝ _____

3. Վարձակալման պայմանագրում ներառված այլ ընտանիքի անդամ(ներ)ի անունները՝ _

_____

4. Զոհի հետ տեղափոխվող այլ ընտանիքի անդամ(ներ)ի անունները՝ _____

_____

5. Տեղակայման հասցեն, որից զոհը տեղափոխություն է խնդրում՝ _____

_____

6. Հասցե կամ հեռախոսահամար զոհի հետ կապ հաստատելու համար՝ _____

_____

7. Մեղադրվող հանցագործի անունը (եթե հայտնի է և կարող է ապահով կերպով բացահայտվել)՝ _____

8. Հանցագործի հարաբերակցական կապը զոհի հետ՝ _____

9. Միջադեպ(եր)ի ամսաթիվը(երը) և անգամ(ներ)ը (եթե հայտնի է)՝ _____

_____

10. Արդյո՞ք տեղափոխություն հայցող զոհը հանդիսանում է բռնաբարության զոհ, որը տեղ է ունեցել այն անշարժ գույքի տարածքում, որից որ Դուք Ձեր տեղափոխությունն ենք խնդրել, և որ այդ բռնաբարությունը տեղի է ունեցել 90 օրացուցային օրվա ընթացքում: Եթե այո, ապա բաց թողե՛ք տվյալ հարցը: 11. Եթէ ոչ, ապա լրացրե՛ք 11-րդ հարցը: _____

11. Նկարագրե՛ք, թե ինչու է զոհը համոզված, որ նրան սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե նա մնա իր ներկայիս տեղակայման վայրում:

_____

12. Կամավոր ներկայացնելու դեպքում, թվարկեք ցանկացած երրորդ կողմի փաստաթղթեր, որոնք Դուք ներկայացնում եք տվյալ ծանուցման հետ մեկտեղ: _____

_____

Սույնով հավաստագրվում է, որ տվյալ ձևաթղթում ներկայացված տեղեկատվությունը ճշմարիտ է և ճշգրիտ՝ իմ համոզմունքով, և որ կետ 1-ում վերը նշված անձը համապատասխանում է անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության համար տվյալ ձևաթղթում սահմանված պահանջներին: Ես ընդունում եմ, որ կեղծ տեղեկատվության ներկայացումը կարող է վտանգի ենթարկել ծրագրին իրավասու լինելու հարցը, և կարող է հիմք հանդիսանալ ընդունման մերժման, աջակցության դադարեցման կամ վտարման համար:

Ստորագրություն _____Ստորագրված է (ամսաթիվ) _____